ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՒՆ ԵՒ ՀԻՒՍՈՒԱԾՈՒԹԻՒՆԻ

(Լ. Ֆոնտենեն Ֆաբուլաներէ)

Զ

Մի՛ լինիր ոչ բնութիւն կեանքիս դաւաճան, մի՛ լինիր,
Մի՛ լինիր ինչ նահաւան մարդուն սիրական, մի՛ լինիր,
Աշխատէ առաքինի նիւթեր ժողովէ անպարտ,
Անոտի անօգտաւէտ բառի օթևան մի՛ լինիր։
Կրօնդ՝ Հայութիւնդ միշտ պահպանէ կեանքիդ նման,
Թաբերայ սուտ կղերի խօսքով Պապական մի՛ լինիր.
Միմիայն քո պատիւը աւելնալու համար՝ տգէտ՝
Փառամոլ՝ աղգուրացող Վասակ՝ Մէհրուժան մի՛ լինիր։
Քո տունը կամ դրացու սենեակները անպահ-պան
Թողնելով՝ օտարների տանը տարաբան մի՛ լի-նիր՝
Բնական ու երջանիկ կեանքդ անուսում թող-նելով՝
Դաւթի ասութեանը նման ուանբան մի՛ լինիր։
Ամենայն մարդու իրա դաղափարով վարուիր հետը,
Ճշմարիտ ընկերութեան կեանքիցը բաժան մի՛ լինիր.
Արտաքին դէմքիդ նման ներքին խորհուրդդ սուրբ արա,
Գարշելի ոսկորներով լեցուն դերեզման մի՛ լի-նիր.
Ծուլութիւնը քեզանից հեռի պահել աշխատի՛ր միշտ,
Աղքատի անտանելի վիճակին արժան մի՛ լինիր.
Ֆիւանի անհիմ ու անհաստատ սերիցը հեռու կաց՝
Վաւուելով (Ալախսի՞) Արթուրի նման մի՛ լինիր։

Է

Ո՛վ սիրտ իմաստութեան եռանդ ունեցիր,
Այս խրատով քեզի վնաս չեմ ասի.
Աշխատէ շնորհք ու տաղանդ ունեցիր.
Մոլութիւնը մէկ գործի մասը չեմ ասի։
Ինչ մարդ չունի նոր սիրտ և նոր գաղափար,
Նա է անոտի յամառուած տխմար.
Ինչ հովիւ հոգ չունի իւր հօտի համար,
Ես նրան մէկ սուտ Աթինաս չեմ ասի։
Կատարեալ վարք՝ հանդարտ անուն ունեցող,
Ուղիղ կրօն՝ Աղգի արիւն ունեցող՝
Բաղդ ու շնորհք՝ գեղեցկութիւն ունեցող
Մարդուն՝ թագաւորից պակաս չեմ ասի։
Ֆիւան գիտցածիդ չափ խօսէ ստոյգը,
Պարզաբանէ սրտիդ եղած ծածուկը.
Ինչ ուսուցիչ լաւ չը կրթէ մանուկը,
Տուած դասին ճշմարիտ դաս չեմ ասի։

Ը

Արարչիցը ամէն մարդու մէկ բնութիւն տուած է,
Որը ազատ որը գերի ցաւերի մէջ խրուած է.
Ճշմարիտ խօսողների գագաթները ծակ պէտք է միշտ,
Որովհետև ստի ձեռքից կեղծաւորին մրուած է։
Ճշմարիտ քաջ գինուորը տես կուվում է, սուսեր չունի,
Աղքատի մեծ գիտունը իր տանը մէկ լապտեր չունի.
Քաղցր արդիւք ինչու իրան համեմատ ընկեր չունի,
Կարելի է լաւը վատին բնականից տուած է։
Կեղծաւորը աշխատում է միամտին խանդարէ,
Հետևում է պարզախօսի ունեցածը աւարէ.
Ուզում է ճշմարտութեան հանդէպ կոխուներ հնարէ,
Սուտ խօսողի աղեղը լարված սուսերը սրուած է։
Տես Ֆիւան ուղղախօսին երթալու ճանապարհ չկայ,
Սուտ լուրերը չորս բոլորը փատտեն՝ համար չկայ,
Իմա նորէն երկնից Աստուած բղաւէ՝ ճար չը կայ
Երբ մէկ մարդու անունը վատ աշխարհի մէջ ցրուած է։

Թ

Տգէտ բամբասողները անծանօթ լուրի կոպասեն՝
Կամ Ֆարմասոն և կամ Լոթրան պատրաստ է քեզ ասեն.
Այնպիսի ողջ մարդիկը խկլքերիցը պակաս են՝
Իրանց փորը անօթի՝ ուրիշի կալը կը կասեն,
Պարապ և անաշխատանք անուսում ցանցառները,
Մտքերովը չափում են . . . . . անտառները՝
Իրբ գազան կը ծախեն խեղճ անուշիկ գառները,
Իրանց գատողութեամբը Նրանց շարքը կը դասեն՝
Ճշմարիտ խօսողները Նրանց գերի են դառել,
Ազգութիւնից հեռացած կարծես վերի են դառել՝
Կրօնից գայթակղուած յուսով թերի են դառել՝
Այսպիսի վատ մարդիկը մեր ազգին շատ վնաս են,
Կոիւ տեսնեն կը ցնծան, մատներն իրար կը քսեն,
Ուզում են այն տեղից էլ մի քանի լուրեր լսեն,
Ուրիշներին որկրամոլ հաւատից դառած կասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն՝ գիտեն թէ՝ մարքուր պաս են,
Ֆիւան առաջը խաղաս՝ քար կը խփեն քոթևին,
Նրանք այնպէս մէկ մարդ են՝ խաւար կասեն արևին,
Արդարութիւնը ի՞նչ է՝ չեն գիտեր ամենևին,
Բարութեան միշտ հակառակ չարութեան մակարդ մաս են,

Ժ.

Աւաղ ձեզ իմ անցած օրեր,
Զգիտնալով զուր կորուսի.
Արիք տեսնեմ ո՞ւր էք կորեր,
Զեզանով շատ լուր կորուսի,
Ցաւս որի՞ն ասեմ կամ ո՞ւմ՝
Որ այժմոյս կամ ես անուսում,
Մէկ օր ուրախ հինգ օր տրտում՝
Ողջ կեանքս տխուր կորուսի,
Ցաւերս անթիւ նման դէզի
Արմատացեալ մէջ պարտիզի,
Իմ մանկութեան օրեր ձեզի
Ո՞հ չեմ գիտեր՝ ո՞ւր կորուսի,
Վշտեր կուգան սրտիս մէջ հիւր՝
Կը դատեն իմ խեղճ ոգիս թիւր,
Անմահական կենաց աղբիւր-
Ներից փայլուն ջուր կորուսի,
Բոլոր սրտով հայցեմ ի քէն՝
Խնայեա Ֆիւանուս արդէն
Կորած օրերուս փոխարէն
Տէր իմ՝ խնդրեմ տուր՝ կորուսի,

ԺԱ.

Վարդ վարդ ասելով կեանքը գնացել է սոխակին,
Մի օր մի ժամանակ չէ հասել իւր նպատակին.
Ափսոս՝ հազար ափսոս նորա սիրոյն ու փափագին՝
Որ չի խնայում խղճալու պատանի հասակին
Դարձեալ աւաղ ասեմ Նորա երգին եղանակին՝
Ունայն սիրովը ծաղրատես է դառել թռչնակին,
Տասն և մի ամիս համբերելով յոյս է նկատում,
Խաւար մէգախառն գաւառից լոյս է նկատում.
Անմարդ անապատ տեղից խրախոյս է նկատում,
Արմատը փտած ծառից նոր բոյս է նկատում,
Վարդին Սոխակը սրտով սուրբ կոյս նկատում,
Կարծում է համեմատ իրաւարդար արեգակին,
Սոխակը ոչնչացրել է մարմինը փափուկ,
Ո՞հ ոհ անելով վարդի սիրուն դառել ծերուկ.
Զուր սիրոյ մասին մահը տարել է քանի մանուկ՝
Ինչպէս ճանաչել է Սոխակը իւր սէր յատուկ,
Բայց չէ իմացել թէ՝ կը սիրէ միշտ փուշը ծածուկ,
Սև ագռաւն էլ նկատում է մէկ ժամանակին,
Այս սիրոյն հաւանող բանական մարդը անօգուտ,
Այն մարդու ձեռաց սուսերը գեղարդը անօգուտ,
Հանդաստանը ցանած ցորենը յարդը անօգուտ,
Ինչպէս Սոխակի հանդիսանաց զարդը անօգուտ,
Թողած բաղասանը կը սիրէ վարդը անօգուտ
Կամ չէ կամ չէ իմացել համբաւը կապուտ մանիշակին,
Ի զուր սիրոյ վերջը Ֆիլանի մարդ կը հարէ ցաւ,
Օգուտ չի բաղել վնասէ ոգին կուտայ զրաւ.
Սիրոյ ծովի վերայ չի կարող ման գալ ամենևաւ,
Ձեռնտու չէ մեզ աննպատակ սէրը չէ իրաւ,
Թիթեռի սէրը ճշմարիտ է միշտ Սոխակից լաւ,
Ամբողջ կենաց իւր անձը նվիրում է կրակին,